ՆՈՐ-ԴԱՐ

№ 169 ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 14 Նոյեմբերի 1902 Հինգշաբթի, 14 Նոյեմբերի ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 169

Տարեկան 10 րուբ., վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կոպ., ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., հասով 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., իսկամնների համար կրկնապատիկ։

1903

ՆՈՐ-ԴԱՐ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրական ամենօրեայ Թերթը 1903-ին կը հրատարակուի *Թիֆլիսում* նոյն ծրագրով և ուղղութեամբ ամեն օր, բացի տօներին հետեւող օրերից։

Սաստւում է ՍԵՊՀԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, երեք ամսուանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հասով գուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կ.։

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը։

ՈՐՏԱՍՏԱՆԻ բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և՛ օտար լեզուներով բառը 2 կ., առաջին երեսում՝ 4 կոպէկ։

Խմբագրատունը գտնւում է Դաւիդովսկայա փողոց, տ. № 5.

Գրասով «Նոր-Դար» ի հասցէն՝ Тифлисъ въ Редакцію „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis Caucase Rédaction du journal «Nor-Dar».

ՅԱՆՁՈՔ. Թիֆլիսում «Նոր-Դար»-ին այժմ բաժանորդ գրուողը, սակաւագոյն է թերթը բաժանորդ գրուելու օրից. Թիֆլիսից դուրս բաժանորդ գրուողներն սակաւագոյն են թերթը ցոյցակէս բաժանորդ գրուելու օրից՝ բաժանորդագնի հետ ուղարկելով 7 մարկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող. — Վրաց Թերթի հետ բանակութիւը։
Քրոնիկոն լուրեր։
Մեզ գրում են.—Մոսկուայից։
Կ. Պոլսի Նայ Թերթերից.
Թղթակցութիւններ.—Նամակ Քրանսիայից, Պարիզ։ Նամակ Պարսկաստանից, Մարագա։
Քաղաքական.—Թիւրքիա. Մակեդոնիա։ Քրանսիա։ Իւլանդիա։
«Նոր-Դար»-ի հեռագրներ։
Խառն լուրեր։

Բանասիրական.—Հիպնոսական երեւոյթներ։
Տնտեսական։
Յայտարարութիւններ։

ԲԱՆԱՍՏԻԱԿՐԱՆ

—

ՀԻՊՆՈՍԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

—

ՏԵԼԵՊԱՏԻ ԿԱՄ ՄՏՔԻ ՓՈԽԱՆԿՈՒՄ ԵՒ ՊԱՅԾԱՌԱՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Ով կամենում է գիտենալ, կամենում է գործել, ով կարող է հարց տալ և պատասխանել, նա է միայն իսկական ուսումնասիրողը։
ՎԵԼՏՄԵՐ

Տելեպատին հոգեկան ընդունակութիւնների ակնյայտնի մի երեւոյթ է։ Երբոր իդէաներ, խորհուրդներ և յուզումներ բուռն գործունէութեամբ մի մտքից դուրս են թղխում և ընդունւում մէկ ուրիշ տպաւորուող և զգայուն մտքի մէջ, դա տելեպատի է։ Արթուն ժամանակ, թէ քնոյ մէջ, դա միևնոյնը է։

Մեր միտքը մտածում է, իսկ բառերը, որպէս մտքի սայլ, նրա մտածածը փոխադրում են դուրս-և տալիս ուրիշին. ուրիշ խօսքով՝ բառերն արտայայտում են միայն մեր մտքի խորհուրդները։

Երկու հոգի միմեանց հետ խօսում են, մէկը խօսում է, միւսը լսում. բայց եթէ լսողի միտքը զբաղուած (կենդրոնացած) է բոլորովին ուրիշ հարցով, նա մինչև անգամ չի էլ կարող յիշել, թէ իւր ընկերը խօսում էր կամ ինչի մասին էր նա խօսում. ինչու,—որովհետև նրա միտքը զբաղուած էր ուրիշ հարցով։ Այս օրինակը բաւական պարզ ցոյց է տալիս, որ մենք ոչ թէ հինգ, այլ վեց զգայարաններ ունինք, և այդ վեցերորդը միտքն է, զգայարաններից ամենից զօրեղը։ Եթէ միտքը կըմտածէ, թէ աչքերը չեն տեսնում, հետևաբար իսկապէս այն կըլինի, որ նրա տեսողութեան զգայարանը (աչքը) չի տեսնիլ. եթէ միտքը կըմտածէ, թէ ձեռքը անզգայացել է, իսկապէս ձեռքը կըդադարի գործելուց և այլն։ Այդ երեւոյթը մենք հիպնոտիզմի մէջ հանդիպում ենք ամենայն օր։ Ես հիպնոսացրել եմ հարիւրաւոր առողջ և հիւանդ մարդկանց և այդ փորձերը կատարել եմ։ Միանգամ ես հիպնոսացնելով պ. Ց. Մանթ.-ին, ուժեղ կերպով նրա մտքում տպաւորում եմ, որ զարթնելուց մի րոպէ յետոյ նրա աչքերը չեն տեսնելու, ականջները չեն լսելու, կամ առաջ սառոյկ ցաւելու է այլն. նա զարթնում է և իսկապէս մի րոպէ յետոյ նրա աչքերը չեն տեսնում, ականջները չեն լսում և ազատը ցաւում է։

Ցետոյ, որ մեր «մտքի աչքը» շատ աւելի ուժեղ և շատ աւելի հեռու է տեսնում, քան մեր աչքը, դա ես իրականութիւն է. մեր աչքը կարող է տեսնել միայն մի որոշ հեռաւորութիւն, բայց մեր մտքի (մտքի աչքի) տեսողութիւնը անսահման է, նա մի ակնթարթում կարող է հազարաւոր մղոններ հեռուն տեսնել։ Մի րոպէ փակեցէք ձեր աչքերը և ձեզ ծանօթ մի հեռաւոր քաղաք ուղեցէք տեսնել, և արդէն մի վայրկեանում դուք այնտեղ էք, այնտեղ դուք կըհանդիպէք ծանօթների, բարեկամների և այլն։ Ապա եթէ մեր մտքի աչքը ընդունակ է տեսնել իրեն ծանօթ հեռաւոր վայրեր, ուրեմն եթէ մենք մշակենք նրան, նա նոյնպէս կարող կըլինի տեսնել իրեն անծանօթ վայրեր և դէմքեր։ Դիմենք գործնական օրինակի։

Հիպնոտիզմի մէջ կայ մի փենոմենա պայծառատեսութիւն (clairvoyance) անունով։ Ենթական այդ դրութեան մէջ տեսնում է իրեն ծանօթ և անծանօթ երկիրները, քաղաքները, մարդիկ, գըտնում կորած առարկաները, լուծում դժուար խնդիրները, հիւանդութեան դիագնոզն իմանում և դարմանն ասում, մինչև անգամ մարդու ապագան գուշակում։ Ես հիպնոսացնում եմ պ. Զումշուդ Գասպարեանին առաջին անգամ սեպտ. 20-ին և շարունակաբար մի քանի անգամներ և վարժեցնում նրա միտքը «պայծառատեսութեան». սկզբի սեանսներում նա խառնում էր, իսկ այժմ նա այնքան վարժ է, որ շատ քիչ սխալներ է անում։ Նա, որ իւր կեանքում ոչ Նիւ-Յօրկումն է եղել և ոչ էլ այդ քաղաքի անունը լսել, նկարագրեց ինձ այդ քաղաքի բոլոր կլիսաւոր փողոցները, մանաւանդ փողոցներից մին շատ կենդանի գոյներով նկարագրեց. նոյնպէս քաղաքային երկաթուղին, էլեկտրական դրսվոյները և այլն. նոյն սենեակում, ուր հիպնոսացրել եմ նրան, պատահել է, որ եղել են հիւրեր. նա իւր աչքերը փակ, քնած, մի առ մի թուեց, թէ ովքեր կան սենեակում, ով ինչ է անում, ուր է նստած, ինչ ունի ձեռքում բռնած։

Պր. Ֆ. Ե.-ին մի անգամ հիպնոսացնելով ասում եմ նրան, որ նա կարող է ամբողջ աշխարհը ման գալ, իւր ուզած տեղերը, և մարդկանց տեսնել և տասը րոպէ յետոյ զարթնել, միաժամանակ նկըշնում եմ, որ զարթնելիս պիտի յիշէ ես թողնում եմ նրան և սենեակից դուրս գալիս. դռնից նկատում ենք, որ նա լաց է լինում, ապա միմիկան փոխում է մի քանի անգամ և ճիշտ տասը րոպէն լրացած, ժամանակ զարթնում ու պատմում, թէ ինքը պնացել էր, ի միջի այլոց, իւր հայրենի գիւղը, այնտեղ տեսել էր հօրը (պարոն հայրը Պ. քաղաքումն էր և վեց ամիս էր, որ նրանից ոչ մի տեղեկութիւն չունէր). հայրը յայտնել է, որ ինքը երեք ամիս է, որ թողել է Պ. քաղաքը և գիւղումն է և թէ Պ. Գ. Ե.-ի մեծ մայրը վախճանուել է, և դրա համար էր նա լաց լինում։ Այդ փորձից մի չորեքթ յետոյ նա նամակ ստացաւ Պ. քաղաքից, իւր հօրիզբօրից, որից իմացուեց, որ իսկապէս հայրը երեք ամսից ի վեր է, որ գիւղումն է։

Մէկ ուրիշ հետաքրքրական փորձ ես կատարում եմ պ. Գ. Ե.-ի վրայ.—հիպնոսացած դրութեան մէջ նկըշնում եմ նրան մօտենալ սեղանին և վերցնել սեղանի վրայ գրուած իւր կիսատ թողած վէպիկը և գրել նրա չարունակութիւնը։ Նա ինքնավստահ կերպով մօտենում է սեղանին, վեր առնում մատիտը և գրում։ Առաջին էջի տողերը նա չկըդադարեցրեց ուղիղ պահել, բայց կըդադարեցրեց մարդը. երկրորդ էջի տողերը նա պահեց աւելի ուղիղ, առանց տառասխալի, բոլոր կէտերը, ստորակէտները, չակերտները իրենց պատշաճ տեղերում գրուած. իսկ գրածը ճիշտ և ճիշտ իւր վէպիկի շարունակութիւնն էր. սենեակը մութ էր և աչքերը փակուած, իսկ զարթնելիս ոչինչ չէր յիշում և զարմանում իւր գրածի վրայ։

Մտքի պայծառատեսութիւնը (clairvoyance) իրականութիւն է։ Ես չեմ խօսում ինչ որ միայն կարդացել և տեսել եմ, այլ խօսում եմ, ինչ որ գիտեմ, ինչ որ ինքս անձամբ փորձել եմ։

Ամեն մի պատահած ենթակայ «պայծառատես» չէ, կամ գոնէ լաւ պայծառատես չէ. մենք շատերի վրայ ենք փորձում և նրանցից ընտրութիւն կատարում. իսկ մեր ընտրածին տակաւին մենք մշակում ենք, այսինքն ամենայն օր հիպնոսացնելով նրա միտքը մշակում, զարգացնում ենք։ Մտքի այդ բարձրութեան հասնելու համար երբեմն ամիսներով մենք փորձեր ենք կատարում։ Այդպէս ենք վարւում և տելեպատիական հաղորդակցութիւն կատարելու համար։ Երկու մտքեր, որոնք ուզում են յարաբերութեան մէջ մտնել հեռաւորութեան վրայ, նախապէս պիտի վարժեցնեն, մշակեն իրենց միաքն այդ նպատակի համար, որը գուցէ նրանցից վերցնէ ամիսներ, տարիներ, բայց երբ միանգամ կըմշակուէ այդ ոյժը երկուսի մէջ, այն ժամանակ, եթէ նրանցից մէկը նստի կառքի մէջ, իսկ միւսը կառապանի դեր կատարի, վերջինս կառքը կառաջնորդէ այն կողմը, ուր կըհրամայէ մտքով կառքում նստողը։

Ցետոյ և այն էլ ճիշտ է, որ բոլոր մարդիկ միևնոյն սենսակ չեն լսում, օրինակ ոմանք լսում են որոշ ձայներ և նրանց ականջները խուլ են միւս ձայների համար. նոյնպէս ամեն ոք միևնոյն կերպով չի տեսնում. ոմանք նշմարում են գոյները, իսկ ոմանք չեն կարող մինչև իսկ երկու գոյների տարբերութիւնները իմանալ, կամ միայն կարող են ջոկել ուժեղ գոյները, չեն կարող նշմարել երանգների նրբութիւնները։ Այսպէս էլ կան մարդիկ, որ չեն կարող ընդունել մտաւոր տպաւորումներ։

Մի միտք պէտք է լինի արտաձգելու հարկ եղած գրութեան մէջ, իսկ մէկ ուրիշ միտք պէտք է լինի բաւականաչափ զգայուն առաջինի արտաձգածն ընդունելու։ Եթէ մէկը կըլինի գրական և միւսը ընդունող կամ կրաւորական գրութեան մէջ, գրական մտքի մտածածը կը տեղաւորուի ընդունող մտքի մէջ. և առանց մտքերի այս համաձայնութեան տելեպատիական հաղորդակցութիւն բացարձակապէս անկարելի է։

Մեր ոչ-կամաւոր (ընդունող) միտքը հաղորդակցելու ուժ ունի մէկ ուրիշ ոչ-կամաւոր մտքի հետ, օրինակ՝ մեր

(M.) 82149 6—2

ՀՈՒՇԱՐՁԱՆ.—Հունվ. 17-ին, վաղ առավոտ, Ղարաքիլիսայի գավառապետ Ա. Ա. Ղազարյանցը, ուղևորվելով Ղարաքիլիսայից Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսայի գավառապետի պաշտոնը հանձնեց ժամանակավոր կառավարիչ Ա. Ա. Ղազարյանին։

ԴԱ ՄՈՍԺ ՃԳՄ

Ռուսական կառավարությունը «Գոլոս Մոսկվի»-ի հրատարակիչ Ա. Ա. Սուվորինին հրավիրել է Պետերբուրգ, որպեսզի նրան հանձնի Ռուսաստանի ներքին գործերի նախարարության մամուլի գործերի գլխավոր վարչության պետի պաշտոնը։ Ա. Ա. Սուվորինը, սակայն, հրաժարվել է այդ պաշտոնը ստանձնելուց։

Ռուսական կառավարությունը հրավիրել է նաև «Նովոյե Վրեմյա»-ի հրատարակիչ Ա. Ս. Սուվորինին, որպեսզի նրան հանձնի Ռուսաստանի ներքին գործերի նախարարության մամուլի գործերի գլխավոր վարչության պետի պաշտոնը։ Ա. Ս

1902 — № 169

ԳԱՂԱՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ

(«Ծաղ-Ծաղ»-ի թղթակցութիւն)

ՅԱՂՂՎՎՓՎՑՎՈՂՓՈՆ Ի

ԱՂՈՒՏԻՆ ՄԻՄԻՄԱՂ ԳԱՂԱՏԻՈՒՄ

Տնօրէն Est-Ouest-ի

ՊԵՏԻՆ Ս. Գասպարեան

Ինչպէս գիտէք դուք, ես եղայ ուրբաթ երեկոյեան ժամը 8-ին մի հրաւէրով, որ ստացել էի Ազգային ժողովի նախագահ Ալեքսանդր Խատիսեանից, որ ինձ հրաւիրել էր իր տունը՝ ընթրիքի։ Ես ուրախ էի այդ հրաւէրից, որովհետև ինձ համար հետաքրքրական էր ծանօթանալ Ազգային ժողովի նախագահի հետ։ Ես գիտէի, որ նա ինձ հետ ունենալու է մի քանի հոգի ևս, որոնց հետ ես ևս ծանօթ չէի

լուց։ Հարկուրն առաջարկում է պատգամաւորների ժողովին հրաժարուել շաքարի կոնվենցիայից։

Նոյեմբերի 13-ից

ՎԱՇԻՆԳՏՈՆ. — Մեծ-Բրիտանիան և Գերմանիան հաւաստիացած են, որ այս տեղի արտաքին գործերի մինիստրութիւնը չի հակառակիլ այդ տէրութիւնների՝ իրենց հպատակների իրաւունքները պաշտպանելու համար, Վենեցուէլի դէմ գործ դնելիք խիստ միջոցներին։ Ռուզվելտը յայտարարեց, որ Միացեալ-Նահանգները մտադիր չեն պաշտպանելու ամերիկեան հասարակապետութիւնները երբ գրանք պիտի տուժեն իրենց սեպհական արարքների համար, բայց, եւրոպական տէրութեան կողմից, նշանակած պատիժը չպէտք է իր մէջ ամփոփի ամերիկեան հողի գրաւում։

ՊԱՐԻԶ.—Քննութիւնը պարզեց, որ Գորի մահուան պատճառը կարող է պատահմունք լինել. Ռեզվովկին արձակուած է։

ԼՈՆԴՈՆ.—Ներքին Տանը Լարուշերը հարցրեց, չկա՞յ արդեօք Եապոնիայի հետ կայացրած համաձայնութեան մէջ գաղտնի յօդուած։ Կրանբորը պատասխանեց, որ նոյեմբ. 6-ին տուած բացատրութիւնների վրայ ոչինչ չունի աւելացնելու։

ՍԵՎԱՍՏԵԱ.—Ծայրքումը չարունակւում է։ Երկրաշարժը չնչին վնաս է պատճառել։

ՊԱՐԻԶ.—Մինիստրների խորհրդում մինիստր-նախագահը հաղորդեց, որ ածխահանքերում բանողների գործադուլը վերջացած է բացի Լուարի կողմերում, բայց այնտեղ էլ պէտք է սպասել, որ աշխատութիւնը կրկերսկսուի։ Քարածխի ընկերութիւնների և բանուորները համաձայնութիւն են կայացրել միջնորդ դատարանի վերաբերութեամբ։ Ֆինանսների մինիստրը լիազօրութիւն է ստացել խնդրելու պատգամաւորների ժողովից երկամսեայ ժամանակաւոր Կրեդիտի թոյլտւութիւն։

ԼՈՆԴՈՆ.—Շեմբերլէյն ուղեւորւում է Աֆրիկա։

ԲԵԼԳՐԱԴ.—Լրագրները հաղորդում են, որ մինիստերական ճգնաժամը դեռ չէ անցած։ Սլաւեան լրագրները գրաւելու կարգադրութիւններ են լինում։ Մինիստր-նախագահ Մարկովիչը վճռեց արձակել երկու ամսից սկուպչինան (ազգային ժողով)։

Կ. ՊՈԼԻՍ.—Դուրը պատուիրել է ծովերի մինիստրութեան նաւերը պատրաստի ունենալ Կարմիր ծովի աւազակների դէմ, ըստ որում Դուրը Իտալիայի առաջ պարտաւորուել է ոչընչացնել Կարմիր ծովում գործող աւազակներին։

ՍՈՖԻԱ.—Ձինուորական մինիստրը մերժեց խմբական հրաժարականը, որ ներկայացրել են 80 մակեդոնացի-ըսպաններ։

Կ. ՊՈԼԻՍ.—Առողջապահական խորհուրդը Օգեսսայից եկողներին զննելու մասին կարգադրութիւնը վերացրեց։

ՀՌՈՄ.—Պապը ընդունեց Վարշաւի եպիսկոպոսին։

ՁՈՆԿԻՁ.—պալատում Կրոնբորնը յայտնեց, որ միջազգային զօրքերը կը հեռացուին չուտով և միաժամանակ։

ՊԱՐԻԶ. Լուբէի ներկայութեամբ բացուեց բժշկական ակադեմիայի նոր շինութիւնը։

ՏՈԿԻՕ.—Եապոնիան իրեն է վերապահում վերստին զօրք ուղարկելու Ջանիայի, եթէ ուրիշ ազգութիւն այդ ընելու լինի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Պետերբուրգ, 12 նոյեմբերի

—

Վեքսելի կուրսը երեք ամսով.

Լոնդոնի վրայ 10 ֆ. ստ. համար	99,85
Բերլինի » 100 մարկի »	—
Պարիզի » 100 ֆրանկի »	—

Վեքսելի կուրսը չէքերով

Լոնդոնի վրայ.	94,70
Բերլինի »	46,30
Պարիզի »	37,67
Բորսային դիսկոնտը . . .	5—6½%
4% պետական ռենտը.	97⅛
4% պետական փոխառութ. . . .	99⅛
4½% ներքին փոխ. 1893 թ. . .	100
4% գրաւած ղ. պետ. ապն. կալ. բանկի	—
5% ներք. խաղ. փոխ. 1864 թ.	482½
5% ներք. խազ. փոխ. 1866 թ.	373½
5% խաղ. գր. պետ. ապն. կալ. բանկի	298½
5% օբլ. Թիֆ. քաղ. վարկ. ընկ.	88⅛
4½% » » » » »	—
4% » Թիֆլ. կալ. բանկի	—
6½% » » » » . .	
5% » Քուրսկի կալ. . .	—
6% » » » .	—
6% » Բագուի »	—
Ակցիաներ Բագուի նաւթ. ընկ.	413
» Կասպիան »	4,450
» Մանթաշեան և ընկ.	199
Փայեր Նորէչ »	—
Ակցիաները » » »	490

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—

Գերմանիայում ոսկ հիւանդութեան դէմ մաքառող յանձնաժողովը որոշել է մանրամասն հետազոտութիւններ կատարել Գերմանիայի բոլոր այն մասերում որտեղ յաճախ նկատւում է այդ հիւանդութիւնը։ Այդ տեսիլ յանձնաժողովը պէտք է ուղարկի բոլոր բժիշկներին հարցական թերթեր, որոնք և պէտք է ոսկ հիւանդութեան տեսակը որոշելիս յայտնեն իրենց կարծիքը թերթերի մէջ։ Բացի դրանից, գերմանական կոմիտէն որոշել է կոչում անել և ուրիշ պետութիւններին, որ նրանք ևս կազմեն նոյնպիսի կոմիտէներ և այդպիսով միջազգային կարգ մղեն ոսկ հիւանդութեան դէմ։

*** Կանանց սպանութեան գործով պարապող Վիդալի մասին երդուեալների դատարանը մահուան վճիռ արձակեց, որն ընդունուեց խլացուցիչ ծափահարութիւններով։ Վիդալը լսելով այդ վճիռը, կանգնեց և խոնարհ գլուխ տալով երդուեալներին սառն կերպով ասաց՝ «ինձ մնում է միայն պարոններ, չնորհակալ լինել ձեզանից»։ Դահլիճում հաւաքուած խուռն բազմութիւնն այդ գործի քննութեան ժամանակ խիստ գրգռուած էր։ Դատարանի չինութեան առաջ կանգնած ամբաստանի ապրակում էր. «Ահ՝ կանանց սպանողին, մահ Վիդալին»։ Այդ աղաղակները լսելով, չարագործն ուսերն սեղմելով արհամարհանքով ժպտաց։ Լսում էր այն ամբողջը մտադիր էր նրան հանել իշխանութեան ձեռքից և զատել նրան Լինչի օրէնքով և այդ մասին նախազգուշութիւններ էին ձեռք առնուած։

*** Ներկայումս ամենից թանկ գիրքը ներկայանում է «Ազատարար պատերազմի պատմութիւնը» խորագրով գիրքը, որի հրատարակման ձեռնակել է Ամերիկայի կառավարութիւնը։ Այդ գիրքը կարժենայ ոչ պակաս քան 2,800,000 դոլար, այսինքն մօտ հինգ միլիոն րուբլի։ Այդ աշխատանքը բաղկացած կլինի հարիւր հատորից, արդէն տասը տարի է, որ տպագրւում է և պատրաստ կլինի առաջիկայ պետրուարին։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՈՑ ՏԵՍԱԻ

Պետերբուրգում, Իլինի յայտնի վիմագրատան մէջ

„Уроки чистописанія для дѣтей".

сост. Макарій.

Գինն է 25 կոպէկ

Հրատարակչի հասցէն՝Эриванъ-Книжнйы магазинъ Петросъ Ованисянцъ

Աբօնէմէնտից դուրս
ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿ. ԹԱՏՐՈՆ
ՈՒՐԲԱԹ, ՆՈՅԵՄԲ. 15-ԻՆ

Հայոց դրամատ. ընկեր. խումբը բարեհաճ մասնակցութեամբ պր. Շմիտհոֆի
ի նպաստ պր. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Կընկերակայցնէ

I

ՈՒՐԻԷԼ ԻԿՕՍՏԱ

Ողբերգութիւն 5 գ. հեղ. Գուցկովի,
թարգմ. Աւալեանի.

Մասնակցում է ամբողջ խումբը։

II

Պր. Շմիտհոֆ կրկտաարի իւր յօրինած մենախօսութիւններից մի քանիսը

ՎԵՐՋԻՆ Է 8 Ժ.

Ձուտով կընկերակայցնեն Ձէքսպիրի «Օթէլլո» ողբերգութիւնը որի համար պատրաստւում են նոր դէկօրացիաներ և զգեստներ

Ռեժիսեօր Յ. ԱԲԵԼԵԱՆ

2—2

ՀԱՐԿԱՒՈՐ Է

Հայ օրիորդ ուսուցչուհի հայերէն լեզուով պարապելու իմ գաւակներիս հետ. երկու աղջկանցմ՝ մէկը՝ 13, միւսը՝ 8 տարեկան և 14 տարեկան տղայ հետ Օրիորդը պէտք է կատարէ և տան անտեսական մասը։ Յանկացողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէով։ Владикавказъ, Маріи Ивановнѣ Хачересовой 1083) 4—3

ԼՈՒՍԱՆՍԿԻ ՀԱՅՈՑ ԱՂՕՏԱՏԱՆ համար հարկաւոր է երգեցողական ձայն ունեցող երկրորդ տիրացու, որը սովորական պատշաճին վճանարից տանձին, պէտք է կարենայ միամայն կամ երգեցիկ խումբ կառավարել։ Ամսական ռոճիկ 15 րուբլի, չրջակայքի տարեկան արտիւնք և եկեղեցական զանձանակի դիմմ՝—Ктитору Армянскаго молитвеннаго дома Аджемову. г. Луганскъ (Екатериносл. губерніи)

(10[illegible]) 0—8

Всѣ подписавшіеся до 25-го декабря 1902 г. получатъ даромъ журналъ и всѣ приложенія за ноябрь и декабрь 1902 г.

60 №№ 183 прилож. Открыта подписка на 1903 г. на иллюстрированный журналъ домашняг хозяйства и по езныхъ свѣдѣній 4 руб. годъ. Разсрочка.

ХОЗЯЙКА

ПО РАСШИРЕННОЙ ПРОГРАММѢ.

Подписавшіеся до 25-го декабря 1902 г. получатъ:

60 №№ богато иллюстр. журнала. Болѣе 2 00 стр. текста. Статьи по всѣмъ вопросамъ домашняго хозяйства. Уходъ за домомъ въ городѣ и деревнѣ.—Порядокъ въ квартирѣ.—Садоводство.—Огородничество.—Полеводство.—Домашнія животныя.—Полезныя искусства въ общедоступномъ примѣненіи.—Полезныя свѣдѣнія, необходимыя въ практической жизни. Безплатные отвѣты Гг. Спеціалистовъ на всѣ вопросы Гг. Подписчиковъ.—Масса иллюстрацій. Отд. №—20 коп.

60 №№ „МАТЬ и ДИТЯ" Болѣе 1000 стр. текста. Физическое и духовное воспитаніе дѣтей.—Гигіена дѣтскаго возраста.—Какъ ухаживать за здоровымъ и больнымъ ребенкомъ.—Дѣтскія игры и забавы дома и на воздухѣ.—Масса иллюстрацій. Отд №—20 к.

60 №№ „КУЛИНАРЪ" Болѣе 1000 стр. текста. Какъ готовить здоровыя и дешевыя кушанья.—Скоромный и постный столъ.—Вегетеріанскій столъ.—Домашніе консервы и заготовки.—Кондит. издѣл.—Напитки.—Меню за недѣлю.—Масса иллюстр. Отд. №—20 к.

28 №№ журнала „МОДЫ". Болѣе 500 стр. текста.—Моды дамскія и дѣтскія.—Прически.—Бѣлье.—Обувь.—Духи и бездѣлушки.—Хроника модъ.—Письма изъ Парижа, Вѣны, Лондона — Искусство красиво и дешево одѣваться. Отд. №—30 к.

28 №№ журнала „ВЫКРОЙКИ и ВЫШИВКИ". По новѣйш. парижск., вѣнск. и лондонскимъ образцамъ, а равно и по рисунк. русск. художник.—Цѣль этого журнала—дать возможность красиво одѣваться домашними средствами. Отд. №—30 к.

7 КНИГЪ богато иллюстрированныхъ КНИГЪ 7

Каждая книжка 150—200 стр. текста обыкн. книжн. формата.

1. РОСКОШНЫЙ АЛЬБОМЪ ВЫШИВОКЪ ВЪ КРАСКАХЪ (отд. стоитъ 2 р. 50 к.).
2. *Проф.* А. Андреа: Домовѣдѣніе (116 рисунковъ).
3. Н. Вортъ: Кройка и шитье дамскихъ и дѣтскихъ платьевъ (съ атласомъ).
4. *Проф.* К. Фишеръ: Цвѣтоводство (93 рисунка).
5. *Проф.* Н. Гаутгартъ. Книга чудесъ (118 рисунковъ).
6. И. Мэнензи: Кройка и шитье бѣлья (съ атласомъ).
7. А. Фрейденборгъ: Самоучитель женскихъ рукодѣлій (съ атласомъ).

Всѣ подписавшіеся послѣ 25-го декабря 1902 г. получатъ только 52 №№ журн. „Хозяйка".—52 №№ журн. „Мать и Дитя".—52 №№ журн. „Кулинаръ".—24 №№ журн. „Моды".—24 №№ журн. Выкр. и Выш. и 6 книгъ (безъ первой).

Цѣна на годъ съ доставкой и перес. 4 руб. Допускается разсрочка: *При подпискѣ* 2 р., *къ 1-му марта* 1 руб. *и къ 1-му мая* 1 руб. Или *первые 3 мѣсяцевъ по* 60 коп. Подписка принимается въ Гл. Конт. „Хозяйка": *С.-Петербургъ, Жевскій пр., д. 69,* и во всѣхъ книжныхъ магазинахъ.

Отвѣтств. Редакторъ Д-ръ Г. М. Бубисъ.

(М.) 82149 6—1

Մագնիսական ՀՈԼԼԵՆԴԵՐ

Այս հեղուկի գործածողներն առանց մի փոքրիկ ցաւ անգամ զգալու ապաքինւում են միանգամայն մոլորից։ Իւրաքանչիւր սրսուկի գինը 35 կ., 2 սրսուկն ուղարկւում է պատով 1 րուբլով, ՀՈԼԼԵՆԴԵՐ լաբորատորիայից. С. Петербургъ, Разъѣзжая ул. № 13.
(М.) 86426 Ծախւում է կայարաբեան բոլոր դեղատներում եւ դեղատնային խանութներում։ 3—1

1865 թ. Մոսկուա 1882 թ. Մոսկուա
1870 թ. Ս.-Պետերբուրգ **ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ** 1896 թ. Նիժնի-Նովգորոդ
ԵՒ ՌԵՏԻՆԻ ՈՒՐԻՇ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱՐԳԵՒԸ (GRAND-PRIX)
Պարիզի ցուցահանդէսում տրուած է Ռուսիայում ՄԻԱՅՆ
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՌԵՏԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ,
որը հիմնուած է 1860 թուականին։
Խնդրում են ՌԵՏԻՆԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ վնելիս ուշադրութիւն դարձնէք տակերի վրայ եղած գրոշմներին՝



մանաւանդ Ընկերութեան հիմնադրութեան „1860" թուականի և „С.-Петербургъ" բառի վրայ, որոնք գտնուած են եռանկեան մէջ (գործարանի դրօշմը)։
մեծ բանակութեամբ վաճառում է
„ԼԻՕՊՈԼԴ ՆԻՅԶԵԼԵՐ" ԱՒՏԻՏՐԱՒԱՆ ՏՈՒՆԸ
Ս.-Պետերբուրգում, Մոսկուայում, Ռիգայում, Ռոստովում-Դոնի վրայ, Եկատերինբուրգում, Որէուտսկում եւ Խարկովում
(1057) 35—14

Доз. ценз. Тифлисъ, 13-го ноября 1902 г. Տպարան ընկ. «Վերեիչն և Կամենմախեր» Типографія Т-ва „Вереичевъ и Каменмахеръ", Михайловск. пр.,№ 81 Телеф. № 852